

Կ'երեւի որ այս Բամագանին ամսականը գալ Բամագանին տրուիլ պիտի որոշուի:

30 Յուլիս

Մէմաֆօր լրագիրն վեց տէրութիւններուն ընելիք նաւային ցոյցը կը ծաղրէ, հրատարակելով Սիմուր ծովապետին տրուած հրահանգներու պատճէնը, զոր որպէս թէ անգղիական լրագիրներէ քաղած է:

Յիշեալ հրահանգներու համեմատ՝ սոյն նաւային ցոյցը խաղաղական հանգամանք պիտի ունենայ. եւ եթէ պ. Սիմուր լոկ բարոյական ցոյցով յաջողի Քարադաղի եւ Յունաստանի տրուելիք հողերը Ալպանիացիներու եւ Թուրքերու ձեռքէն առնել՝ ծանր պատասխանատուութիւն մը պիտի հրաւիրէ իւր վրայ: Եթէ լեռներու վրայ Ալպանիացիներ երեւին՝ զրահաւորները թշնամոյն ետեւը պիտի շարուին. զրահաւորներու մէջ զօրքերը գինիի եւ սիրոյ երգեր պիտի երգեն, գերմանական եւ ֆրանսիական զրահաւորներն իրարմէ հեռու պիտի մնան, որ իրարու չզարնեն, նոյնպէս իտալականն եւ աստրիականն ալ ամենէն հեռու. Քարադաղցիներուն կամքը կատարուելուն պէս՝ զրահաւորները Յունաստանի ջուրերը պիտի երթան. պ. Սիմուր խնջոյքներ պիտի տայ միւս հրամանատարներուն, բայց ծախքն Անգղիոյ կառավարութեան վրայ չպիտի լինի:

31 Յուլիս

Դեսպաններն հայկական խնդրոյն վրայ միշտ կը խորհրդակցին, բայց արդիւնքը դեռ յայտնի չէ:

**

Եւ որովհետեւ նաւային ցոյցին զօրութիւնն լոկ բարոյական է՝ կ'առաջարկեմ որ վեց տէրութիւններն պարապ տեղը մեծ ծախքերու չենթարկուին՝ իրենց զրահաւորները Թուրքիա դրկելով. հերիք է որ այդ զրահաւորներուն պատկերները քաշել տան եւ շրջանակի մը մէջ անցունելով դրկեն մեզի, որ Բ. Դրան մէջ պատէ մը կախենք:

**

1 Օգոստոսի

Մարախներն որ անցեալ ամիս մայրաքաղաքիս մէջ թափուեցան եւ ուտելու բան չգտնելով Ասիա անցան՝ Պիլէճիկի կողմերն գացած են եւ բոլոր հունձերն արշտկած են հոն: